ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հունվարի 19-ին կայացավ Նոր Արտագերս համայնքի ընդհանուր ժողով՝ մասնակցությամբ 61 անդամների:

Ժողովին ներկա էր Արմավիրի մարզպետարանի աշխատակից Համլետ Կուրղինյանը, ներկա էին նաև դպրոցի, բուժ. ամբուլատորիայի և համայնքապետարանի աշխատակիցները:

Ժողովը նախագահում էր համայնքի ղեկավար Խաչատուր Ջանազյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Վարդանյանը:

Օրակարգ

1. Նոր Արտագերս համայնքի ղեկավարի 2017թ. երկրորդ կիսամյակի և գյուղապետարանի տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվություն:

ԶԵԿ. Խ. ՋԱՆԱԶՅԱՆ

2. Համայնքի հիմնախնդիրները:

ԶԵԿ. Խ. ՋԱՆԱԶՅԱՆ

Օրակարգի հաստատման վերաբերյալ առարկություններ չեղան:

1. Լսեցին

Գյուղապետարանի 2017թ. երկրորդ կիսամյակի և տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:

2017թ. երկրորդ կիսամյակում համայնքում կատարվել է զգալի աշխատանքներ:

Վերանորոգվել և փոխվել են խորքային հորի պոմպերը և սնեցող բաքերը, ոռոգման ջուրը հասանելի է եղել բոլոր հողօգտագործողներին:

Հողօգտագործողներն բաժանվել է շուրջ 50.5 տ. ազոտական, կալիումական, ֆոսֆորական պարարտանյութեր և 2500լ. դիզելային վառելանյութ:

Ստացված բերքը և ստացված եկամուտները գարնան ցրտահարության պատճառով եղել է բավականին ցածր:

Ինչ վերաբերվում է գյուղապետարանի նկատմամբ բնակչության պարտավորություններին՝ հողի հարկի և գույքահարկի հավաքագրմանը, ապա ցածր բերքի ստացումը առաջացրել է բնակչության անվճարունակությանը,որի պատճառով եղ հողի հարկի գանձումը կազմել է 56.8%, իսկ սեփական եկամուտների զծով հավաքագրումը կազմել է 60.1%:

Կազմակերպվել է միջոցառումներ՝ համայնքի միջնակարգ դպրոցի ավարտական դասարանի աշակերտների վերջին զանգի, սեպտեմբերի 1-ի և ամանորի կապակցությամբ: Գումարվել է ավագանու 16/տասնվեց/ նիստ:

Երկու միլիոն ՀՀ դրամ տրամադրվել է որպես օգնություն:

Դպրոցի առաջին դասարան հաճախող 16 երեխաների նվիրել ենք դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:

Ամանորի կապակցությամբ մանկահասակ և 1-ից մինչև 5-րդ դասարանի 170 երեխաների բաժանվել են ամանորյա նվերներ :

Համայնքի ամրողջ փողոցները ավազապատվել են և հարթեցվել:

Արտահայտվեցին Ա. Բաղալյանը, Ս. Խաչատրյանը և Ա.Լաչինրանը: Նրանք տվեցին իրենց դրական գնահատականը համայնքապետարանի կատարած աշխատանքների վերաբերյալ:

Լսեցին 2

Համայնքի հիմանդնդիրները

1. Կուլտուրայի տան հիմնանորոգում
2. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում
3. Խմելաջրի ջրագծերի հիմնանորոգում
4. Գյուղամեջյան ճանապարհի 1,5 կմ. տարածության ասֆալտապատում:
5. Մատուռի կառուցում:

Ժողովը որոշեց

Հանձնարարել համայնքի ղեկավար Խաչատուր Ջանազյանին զբաղվելու համայնքի հիմնախնդիրների իրականացման վերաբերյալ հարցին, հատկապես խմելաջրի խողովակների նորոգմանը:

ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ՋԱՆԱԶՅԱՆ

19.հունվար 2018թ.